ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ

ՎԶՄԲ Վարկ No.8374-AM
ԶՄԸ Վարկ No. 5504-AM
ԶՄԸ Վարկ No. 5505-AM

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ՝ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՆԱՄԱԿ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

2023թ. փետրվարի 28-ին ավարտված տարվա ծրագրի հատուկ նպատակների Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ

Մարտ, 2023թ.
Երևան

Որակավորված Աուդիտոր՝ գրանցված ՀՀ պետական ռեգիստրում,
Աուդիտորական ծառայությունների իրականացման ԱԾ թիվ 082 լիցենզիա՝
Տրված ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից

Հեռ.՝ +37460 528899
Էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ հարկ, տարածք 7

Ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությանը

Մենք աուդիտի ենք ենթարկել ՎՁՄԲ 8374-ԱՄ, ՁՄԸ 5504-ԱՄ և ՁՄԸ 5505-ԱՄ Վարկային Համաձայնագրերով ֆինանսավորվող և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող "Համայնքների Գյուղատնտեսական Ռեսուրսների Կառավարման և Մրցունակության Երկրորդ ծրագրի" (այսուհետ՝ Ծրագիր)՝ 2023թ. փետրվարի 28-ին ավարտված տարվա հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է՝ արտահայտել կարծիք նշված հաշվետվությունների՝ «*Ֆինանսական Հաշվետվություններ Հաշվապահական Հաշվառման Դրամարկղային Միջոցների Սկզբունքով*» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի համապատասխան պատրաստման և ճշմարիտ ներկայացման վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Այդ նպատակով, նաև ձեռք ենք բերել աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ծրագրի իրականացման ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Ընթացիկ աուդիտի ընթացքում մեր կողմից չեն բացահայտվել հարցեր, որոնց վրա կցանկանայինք հրավիրել Ձեր ուշադրությունը:

Շնորհակալություն ենք հայտնում համագործակցության համար:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան
Տնօրեն

Երևան
15 մարտ 2023թ.

Բի-Դի-Օ Արմենիա ՓԲԸ-ն հանդիսանում է բրիտանական Բի-Դի-Օ Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերության անդամ և Բի-Դի-Օ անկախ ընկերությունների միջազգային ցանցի անդամ: